ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2025 թվականի N 276-Ա

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 16-րդ մասի «դ» կետը և 15-րդ հոդվածի 9-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը Սիթի բանկում (CITIBANK, N.A., LONDON BRANCH)՝ (այսուհետ՝ բանկ) բացել արտարժութային (USD) ավանդային արտաբյուջետային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտքի կառավարման քաղաքականությունների իրականացմանն աջակցելու համար:

2. Սույն որոշման առաջին կետում նշված արտաբյուջետային հաշվով իրականացնել հետևյալ գործառնությունները՝

1) 2025 թվականի մարտի 12-ին թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի մուտքից 334,236,684.5 ԱՄՆ-ի դոլար գումարը մինչև 2025 թվականի մարտի 24-ն ավանդադնել բանկում՝ բանկի կողմից սահմանված պայմաններով և սակագներով.

2) ավանդադրված գումարների հաշվին կատարել 2025 թվականին մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսերի 2025 թվականի մարտի 24-ի վճարման ամսաթվով տոկոսավճարը և հիմնական գումարի մարումը՝ համապատասխանաբար 11,195,684.5 ԱՄՆ-ի դոլար և 313,166,000.0 ԱՄՆ-ի դոլար գումարով.

3) ավանդադրված գումարների հաշվին կատարել 2029 թվականին մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսերի 2025 թվականի մարտի 24-ի վճարման ամսաթվով տոկոսավճարը՝ 9,875,000.0 ԱՄՆ-ի դոլար գումարով:

3. Սույն որոշման 2-րդ կետում նկարագրված գործառնություններից բխող բոլոր ձևակերպումներն արտացոլել գանձապետական հաշիվներում՝ որպես մուտք և ելք, ավանդադրման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

4. Սահմանել, որ սույն որոշման համաձայն բացված արտաբյուջետային հաշիվը գործելու է մինչև 3 ամիս ժամկետով:

5. Սույն որոշումը տարածվում է 2025 թվականի մարտի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ